

# Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց ՈՒ Թ Յ Ա Ն Հ ՈՒ Շ Ա Գ Ի Ր

ք. Իջևան  
2019 թ.

22 փետրվարի

«ՀՀ Տավուշի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան)՝ ի դեմս մարզպետ Հայկ Չոբանյանի, Երևանի Պետական Համալսարանի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ Համալսարան)՝ ի դեմս տնօրեն՝ Արտակ Յուցույանի և «Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն» գիտակրթական հիմնադրամը (այսուհետ՝ Կենտրոն)՝ ի դեմս գործադիր տնօրեն Ամայա Եղոյանի (բոլորը միասին այսուհետ՝ «Կողմեր»), հաշվի առնելով ՀՀ Տավուշի մարզում բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման նպատակով միմյանց հետ համագործակցելու պատրաստակամությունը և կարևորելով Կողմերի համագործակցության պաշտոնական ամրագրման անհրաժեշտությունը, կնքեցին սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր)՝ հետևյալի մասին.

## 1. Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ր Ի Ա Ո Ա Ր Կ Ա Ն

1. Կողմերը համաձայնության են գալիս համատեղ գործունեության շրջանակներում միավորել իրենց ջանքերը՝ նպաստելու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գործընթացին:
  - 1.1 Կողմերը համաձայնվում են՝ համատեղ իրականացնել հետևյալ ծրագրերը.
    - 1.1.1 տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՏ) ոլորտի մասնագիտական դասընթացների անցկացում,
    - 1.1.2. ՀՀ Տավուշի մարզի երիտասարդներին, դպրոցների աշակերտներին մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցության ցուցաբերում, այդ թվում՝ բաց դասերի, դասախոսությունների և սեմինարների կազմակերպման միջոցով,
    - 1.1.3. Իջևան քաղաքում տեխնոլոգիական ուղղվածությամբ միջոցառումների կազմակերպում,
    - 1.1.4. «Ինֆորմատիկա» առարկան դասավանդող ուսուցիչների մասնագիտական վերապատրաստում,
    - 1.1.5. տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում սկսնակ ձեռներեցներին աջակցության ցուցաբերում, սկսնակ բիզնեսի զարգացմանն ուղղված ռազմավարության մշակում,
    - 1.1.6. համագործակցություն ՀՀ Տավուշի մարզի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների և կենտրոնների հետ, այդ թվում՝ կադրերի համալրման գործում աջակցության միջոցով:

- 1.2 Կողմերի համատեղ գործունեությունը հիմնված է օրինականության, իրավահավասարության, կամավորության և հրապարակայնության սկզբունքների վրա:
- 1.3 Համագործակցության ծրագրերն իրագործելի են միայն Կողմերի կողմից դրանց գործողության ժամկետներն ու փուլերը հաստատելուց հետո:
- 1.4 Սույն Հուշագրի իրականացման շրջանակներում Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ծանոթանալու համատեղ գործունեության իրականացման հետ կապված ողջ տեղեկատվությանը և փաստաթղթերին:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Հուշագրից բխող՝ Կողմերի համատեղ գործունեության նպատակներն են՝

- 2.1.1 նպաստել ՀՀ Տավուշի մարզում ՏՏ ոլորտի զարգացմանը, աջակցել ոլորտում աշխատող երիտասարդների գործունեության արդյունավետության բարձրացմանը,
- 2.1.2. նպաստել ՀՀ Տավուշի մարզում գործող կրթօջախների, հանրային կազմակերպությունների միջև ՏՏ ոլորտում համագործակցության ապահովմանը,
- 2.1.3. իրականացնել Կողմերի աշխատակիցների և անդամների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն,
- 2.1.4. նպաստել մարզի ազգաբնակչության տարբեր շերտերի՝ ՏՏ ոլորտի գիտելիքների և կարողությունների զարգացմանը:

2.2 Հուշագրից բխող՝ Կողմերի համատեղ գործունեության խնդիրներն են՝

- 2.2.1. համագործակցել այլ կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ կրթական համակարգի զարգացման ուղղությամբ,
- 2.2.2. օժանդակել ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը,
- 2.2.3. միջոցներ ձեռնարկել ՀՀ Տավուշի մարզում ժամանակակից կրթական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ,
- 2.2.4. նպաստել հասարակության ՏՏ ոլորտի իրազեկության մակարդակի բարձրացմանը,
- 2.2.5. կազմակերպել վերապատրաստումներ, դասընթացներ, գիտաժողովներ, սեմինարներ, մրցույթներ և այլ միջոցառումներ,
- 2.2.6. միջոցներ ձեռնարկել ՀՀ Տավուշի մարզում տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնների կայացման, ինչպես նաև ոլորտի կազմակերպությունների ցանցի ընդլայնման ուղղությամբ,
- 2.2.7. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

### **3. ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

- 3.1 Հուշագրի հիման վրա համատեղ գործունեության ընթացքում որպես Կողմերի ներդրումներ կարող են լինել՝
- 3.1.1 նյութատեխնիկական ռեսուրսները, այդ թվում՝ համակարգչային սարքավորումներ, գրադարանային ռեսուրսներ, տեղեկատվական համակարգեր և ցանցեր, տրանսպորտային միջոցներ, այլ շարժական և անշարժ գույք,
  - 3.1.2 Ուսումնամեթոդական նյութերը, կրթական գործընթացի ժամանակ ինտելեկտուալ գործունեության արդյունքները և Կողմերի բացառիկ իրավունքները դրանց նկատմամբ, կրթական տեխնոլոգիաները,
  - 3.1.3 Կողմերի անդամների, ուսանողների, աշխատակիցների մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները՝ ուղղված համատեղ ծրագրերի, նախագծերի, այլ միջոցառումների իրականացմանը,
  - 3.1.4 Կողմերի գործնական կապերը, կրթական, գիտական և նորարարական գործունեության փորձը,
- 3.2 Հուշագրի շրջանակներում Կողմերի համատեղ գործունեության ֆինանսավորման աղբյուրներն են.
- 3.2.1 մասնակիցների բյուջետային և արտաբյուջետային միջոցները,
  - 3.2.2 միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցները,
  - 3.2.3 բարեգործական ներդրումները,
  - 3.2.4 կրթության դիմաց ստացված միջոցները (Կողմերի սահմանած պայմաններով),
  - 3.2.5 ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցները:

### **4 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

4. Հուշագրի Կողմերի համատեղ գործունեության ղեկավարումն իրականացնում են Կողմեր հանդիսացող կազմակերպությունների ղեկավարները կամ նրանց կողմից նշանակված լիազոր ներկայացուցիչները:
- 4.1 Կողմերի կողմից համատեղ կազմված աշխատանքային խումբը՝
- 4.1.1 սույն Հուշագրի շրջանակներում քննարկում է Կողմերի գործունեության կազմակերպմանն առնչվող հարցեր,
  - 4.1.2 հաստատում է Կողմերի համատեղ գործունեության կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը,
  - 4.1.3 լսում է համատեղ ծրագրերի, մշակումների, հետազոտությունների, այլ միջոցառումների վերաբերյալ այնպիսի առաջարկություններ և քննարկում նախագծեր, որոնցով հետաքրքրված են Կողմերը,
  - 4.1.4 առաջարկում է դրանք իրականացնել Կողմերին՝ առանձին կնքվող պայմանագրերի հիման վրա, լսում է դրանց կատարման վերաբերյալ հաշվետվություններ:

## **5 ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5.1 Կողմերի համատեղ նախագծերի ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև դրա ղեկավարման գործում Կողմերն ունեն հավասար իրավունքներ:

5.2 Առանձին գործողությունների համար պատասխանատու է Կողմ հանդիսացող կազմակերպությունը:

5.3 Կողմերը կոնկրետ ծրագրեր իրականացնելիս՝ առանձին պայմանագրում նախատեսում են նաև Կողմերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները:

## **6 ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

6. Այն բոլոր վեճերն ու տարաձայնությունները, որոնք կարող են բխել սույն Հուշագրից կամ կապված լինել դրա հետ, կորոշվեն Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Եթե Կողմերը չեն կարողանում գալ ընդհանուր համաձայնության, ապա վեճերն ու տարաձայնությունները ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## **7 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն Հուշագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կատարվում են գրավոր, ստորագրվում են Կողմերի կողմից և կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

7.2 Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է անժամկետ:

7.3 Սույն Հուշագիրը կնքված է հայերեն լեզվով՝ երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

**8 ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ**



**ՀՀ Տավուշի մարզպետարան  
Մարզպետ՝  
Հայկ Չոբանյան**

/Ատորագրություն/

Կ՞տ՞



**Երևանի Պետական  
Համալսարանի Իջևանի  
մասնաճյուղ  
Տնօրեն՝  
Արտակ Ցուցույան**

/Ատորագրություն/

Կ.տ.



**«Գյումրիի Տեղեկատվական  
Տեխնոլոգիաների Կենտրոն» ԳԿՀ  
Գործադիր տնօրեն՝  
Ամալյա Եղոյան**

/Ատորագրություն/

Կ.տ.